ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«12» հոկտեմբերի 2017 թվականի № 124-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ընդերքի գործակալության պետի պաշտոնակատարի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի միջնորդագիրը «Մետպրոգրես» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման գործընթացը սկսելու առաջարկության վերաբերյալ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ցուցաբերել նախաձեռնություն և հարուցել վարչական վարույթ «Մետպրոգրես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թույլ տրված խախտման հիմքով:

2. Վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովին՝

1) վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման մասին.

2) վարչական վարույթի արդյունքում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ներկայացնել համապատասխան

վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն՝ ներկայացնելով նաև վարչական ակտի նախագիծը:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ